



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 նոյեմբերի 2024 թվականի N 222-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՀԱՏՎԵՆԳԻԱՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ
ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տարամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 12-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով Գորիս համայնքի կողմից 2025 թվականի համար ներկայացված հետևյալ ծրագրային հայտերին՝
 - 1) Գորիս համայնքի ներհամայնքային ճանապարհային ցանցի հիմնանորոգում՝ Գորիս քաղաքի Բակունցի փողոցի հիմնանորոգում,
 - 2) Գորիս համայնքի ներհամայնքային ճանապարհային ցանցի հիմնանորոգում՝ Գորիս քաղաքի Խորենացի փողոցի մի հատվածի հիմնանորոգում /Կոմիտասի փողոցից մինչև Քրիստափորի փողոց/,
 - 3) Գորիս համայնքի ներհամայնքային ճանապարհային ցանցի հիմնանորոգում՝ Գորիս քաղաքի Գարեգին Նժդեհ /Չոփչուն ձոր/ փողոցի հիմնանորոգում,
 - 4) Գորիս համայնքի ներհամայնքային ճանապարհային ցանցի հիմնանորոգում՝ Գորիս քաղաքի Այգեստան փողոցի մի հատվածի հիմնանորոգում /Քրիստափորի փողոցից մինչև քաղաքային ֆուտբոլի դաշտ/:
2. Համայնքի ղեկավարին՝ սահմանված ժամկետում սույն որոշմամբ հաստատված սուբվենցիայի ծրագրային հայտերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմ:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌՌԻՇԱՆՅԱՆ ԱՌՌԻՇ
ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ԳԱԼՍՅԱՆ ԱՆԻ

ԻՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ
ԼԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀԱԿՈՒԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՀԱԿՈՒԲՅԱՆ ՄԱՐԻՆԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ
ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՏՈՒՌՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2024թ. նոյեմբերի 30
ք. Գորիս



ԱՐՄԱՅՈՒՆՅԱՆ ԱՌՈՒՇ
ՍՏԱՄԵՆՅԱՆ ԱՐՄԱՅՈՒՆ
ՔԱՐՊՈՒՆՅԱՆ ԼՅՈՒՆ
ԲԱԼՍԱԿՆ ԼՍՈՒ